

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. մարտի 24-ին տեղի ունեցած ԳՊՄԻ-ի ֆիզիկամաթեմատիկական և
անտեսագիտության ֆակուլտետի

ֆակուլտետային խորհրդի թիվ 8 նիստի

Նախագահ՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

Ֆակուլտետային խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան

Նիստին մասնակցում էին ֆակուլտետային խորհրդի 14 անդամները:

Օրակարգ՝

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատումն ըստ ուսանողների և դասախոսների:
2. Առկա համակարգի երկրորդ կիսամյակի առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատում:
3. Առկա համակարգի երրորդ կուրսի մանկավարժական /ուսումնական/, արտադրական պրակտիկայի վայրերի հաստատումն ըստ ուսանողների:
4. Ուսանողական հանրապետական գիտական նստաշրջանի աշխատանքների կազմակերպում:
5. Ուսանողների մնացորդային գիտելիքի ստուգման կազմակերպման և գնահատման կարգ:
6. Տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Մկրտչյանին որպես գիտական խորհրդի անդամի ընտրությունը

Զեկուցող՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

1. **ԼՍԵՑԻՆ**- Մ. Մարգարյանի հաղորդումն առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքները ըստ ուսանողների և դասախոսների հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքները ըստ ուսանողների և դասախոսների:

2. **ԼՍԵՑԻՆ**- Մ. Մարգարյանի հաղորդումն առկա համակարգի երկրորդ կիսամյակի առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել առկա համակարգի երկրորդ կիսամյակի առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերը:

3. **ԼՍԵՑԻՆ**- Մ. Մարգարյանի հաղորդումն առկա համակարգի երրորդ կուրսի մանկավարժական /ուսումնական/, արտադրական պրակտիկայի վայրերը ըստ ուսանողների հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել առկա համակարգի երրորդ կուրսի մանկավարժական /ուսումնական/, արտադրական պրակտիկայի վայրերը ըստ ուսանողների:

4. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումն ուսանողական հանրապետական գիտական նստաշրջանի աշխատանքների կազմակերպման մասին

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, Ա. Սահակյանը:

Ա. Սահակյանը ներկայացրեց 2015թ-ի ապրիլի 23-ին ուսանողական հանրապետական գիտական նստաշրջանի կազմակերպչական աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ արժանավոյնս մասնակցել Հանրապետական ուսանողական գիտական նստաշրջանին:

5. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի ուսանողների մնացորդային գիտելիքի ստուգման կազմակերպման և գնահատման կարգի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

Ներկայացված կարգը քննարկվեց խորհրդի նիստում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դիտողություններ և առաջարկություններ չներկայացնել:

6. ԼՍԵՑԻՆ.- Տիգիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Մ. Մարգարյանի հաղորդումը տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Մկրչյանին՝ որպես գիտական խորհրդի անդամ ընտրելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆեսորներ Ս. Մարգարյանը, Հ. Դրմեյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Քվեարկության արդյունքում միաձայն գիտական խորհրդի անդամ ընտրվեց տնտեսագիտության ամբիոնի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Մկրտչյանը:

2.Ռեկտորի հաստատմանը ներկայացնել գիտական խորհրդի նոր անդամի՝ տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պոշտոնակատար Արթուր Մկրտչյանի թեկնածությունը:

Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետ

խորհրդի նախագահ՝

Մ. Մարգարյան

Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետային
խորհրդի քարտուղար՝

Ա. Սահակյան

24.03.2015թ.